«ՖԱՍԹ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2025թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2025թ. տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնես արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն:

Բանկի Տնօրինության անդամները՝

Գարեգին Դարբինյան	Գործադիր տնօրեն- Տնօրինության նախագահ		
անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գոհար Հարությունյան	Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վասիլ Մամիկոնյան	Թվային բանկինգի տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Միսիթարյան	Կորպորատիվ բիզնեսի կառավարման տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Սարգսյան	Մանրածախ բիզնես կառավարման և տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Թաթուլ Թամրազյան	Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Ավագյան	Ռիսկերի կառավարման և համապատասխանության տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմինե Տեր- Հովսեփյան	Զարգացման տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ալիկ Ստեփանյան	Գործառնական տնօրեն, Տնօրինության անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ «ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2025թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն շարունակում է գրանցել դրական աճ՝ մեծ չափով ավելացնելով ակտիվները, նոր պրոդուկտներ և գործիքակազմ:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 421.6 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 52%-ով:

Բանկի ակտիվներում մեծ տեսակարար կշիռ են կազմում հաճախորդներին տրված վարկերը՝ 78%: Վարկային պորտֆելը, ներառյալ նաև լիզինգի պորտֆելը, հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմում է 341 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 55%-ով:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները՝ 24.9 մլրդ ՀՀ դրամով կազմում են ակտիվների 6 %-ը:

Ներդրումային արժեթղթերի պորտֆելը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմում է 28 մլրդ ՀՀ դրամ կամ Բանկի ակտիվների 7%-ը՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 114%-ով :

2025թ.-ի ընթացքում ակտիվների աճին զուգահեռ աճել են նաև Բանկի պարտավորությունները՝ կազմելով 338 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները 2025թ տարեվերջին կազմել են 247.9 մլրդ ՀՀ դրամ՝ կազմելով ընդհանուր պարտավորությունների մոտ 73%-ը՝ նախորդ տարվա 71%-ի համեմատ:

Նախորդ տարվա նկատմամբ աճել են նաև թողարկված պարտատոմսերի միջոցով ներգրավված միջոցները, որոնք հաշվետու ամսաթվին կազմել են 28.5 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսավորելով ընդհանուր ակտիվների 7%-ը: 31.12.2025թ.-ի դրությամբ Ընկերության թողարկած պարտքային արժեթղթերի պորտֆելն ունի հետևյալ կառուցվածքը՝ 20.3 մլրդ դրամ – դրամային պորտֆելն է, 7.5 մլրդ դրամ – դոլարային պորտֆելն է և 0.7 մլրդ դրամ – եվրոյի պորտֆելն է:

31.12.2025թ.-ի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 83.6 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով մոտ 21%-ով:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բանկի տոկոսային եկամուտները աճել են և 31.12.2025թ.-ի դրությամբ կազմում են 43.3 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է շուկայի մոտ 4.2%-ը: Տոկոսային ծախսերը կազմել են 21.4 մլրդ դրամ: Զուտ տոկոսային եկամուտը (ներառյալ այլ տոկոսային եկամուտներն էլ) դիտարկվող ժամանակահատվածի համար կազմել է 23.2 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 51 %-ով:

Զուտ տոկոսային եկամուտը վարկային կորուստների գծով ծախսերը նվազեցնելուց հետո կազմում է 22 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը մոտ 7 մլրդ ՀՀ դրամով:

Բանկի գործառնական եկամուտը կազմել է 25.6 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 53%-ով:

Արդյունքում 2025թ. Բանկն ունեցել է 7.9 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով շուրջ 2.8 մլրդ ՀՀ դրամով:

ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Ֆինանսական ոլորտում մրցակցային դիրք ապահովելու և որպես Բանկ լայնածավալ գործունեություն իրականացնելու նպատակով Բանկը շարունակում է ակտիվ գործունեություն ծավալել ֆինանսական, մարդկային ռեսուրսների ինտեգրման, ինչպես նաև ռիսկերի կառավարման ուղղությամբ: Կադրերի հավաքագրման նշանակությունն էական է. դա են փաստում նախորդ տարվա նկատմամբ ունեցած աշխատակիցների թվաքանակի աճը: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ընկերության աշխատակիցների քանակը աճ է գրանցել՝ 31.12.2025թ.-ի դրությամբ հասնելով 1,361-ի , ինչը 24 %-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկն աջակցում է իր աշխատակիցներին ֆինանսաբանկային ոլորտում մասնագիտանալու և հմտություններ ձեռք բերելու հարցում: Բանկի յուրաքանչյուր ստորաբաժանում ունի անձնակազմի ուսուցման գծով պատասխանատու, ով կազմակերպում է վերապատրաստումներ տվյալ ստորաբաժանման, ինչպես նաև մասնաճյուղերի աշխատակիցների համար: Բանկն օգտվում է նաև ինստիտուցիոնալ վերապատրաստում իրականացնող ընկերությունների ծառայություններից:

Բանկում գործում է Խորհրդի կողմից հաստատված վարձատրության հաշվարկման և վճարման կարգը, որն ըստ ստորաբաժանման, յուրաքանչյուր հաստիքի համար

նախատեսում է լրավճար, պարգևավճար և հաստիքային աշխատավարձ: Միևնույն ժամանակ, Բանկում նախատեսվում է տարին մեկ անգամ աշխատավարձի վերանայում:

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն բանկային գործունեության լիցենզիա ստանալուց հետո շարունակում է ամրապնդել իր տեղը բանկային համակարգում: 31.12.2025թ.-ի դրությամբ զուտ շահույթի մեծությամբ բանկերի շարքում ընկերությունը զբաղեցրել է 14-րդ հորիզոնականը 7.9 մլրդ դրամով՝ 31.12.2024 թվականի նկատմամբ աճելով 2.8 մլրդ ՀՀ դրամով: Շահույթի էական աճով աչքի են ընկնում Արդշինբանկը (137 մլրդ, տեսակարար կշիռը համակարգում՝ 32.5%), Ամերիաբանկը (72.6 մլրդ, 17.2%), ԱԿԲԱ բանկը (36.2 մլրդ, 8.6%), ինչպես նաև Ինեկոբանկը (29.6 մլրդ, 7%):

Հաշվետու ժամանակահատվածում Բանկը շարունակել է դրական աճ գրանցել. բանկի ակտիվները աճել են 144.2 մլրդ ՀՀ դրամով՝ հասնելով 421.6 մլրդ ՀՀ դրամի, տեսակարար կշիռը բանկային համակարգում հասցնելով 3.3%-ի՝ նախորդ տարվա 2.5% -ի համեմատ: Ընդ որում, ակտիվների բացարձակ աճի մեծությամբ Բանկը համակարգում զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը. ավելի բարձր աճ են գրանցել միայն Ամերիաբանկը (+452,3 մլրդ ՀՀ դրամ), Արդշինբանկը (+370,6 մլրդ ՀՀ դրամ) և Էվոկաբանկը (+183,5 մլրդ ՀՀ դրամ):

31.12.2025թ. դրությամբ վարկային պորտֆելի ցուցանիշով Բանկը ՀՀ բանկերի շարքում առաջ է անցել մի քանի բանկերից և զբաղեցնում է 9-րդ հորիզոնականը՝ պորտֆելը աճեցնելով 55%-ով՝ մինչև 341 մլրդ ՀՀ դրամ: Միաժամանակ, վարկային պորտֆելի տեսակարար կշիռը բանկային համակարգում աճել է 1 տոկոսային կետով՝ կազմելով 4.4%: Նշված աճի դինամիկայի շրջանակում Բանկը նաև վարկային պորտֆելի բացարձակ աճի մեծությամբ զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը համակարգում՝ զիջելով միայն Ամերիաբանկին (+362,5 մլրդ ՀՀ դրամ) և Արդշինբանկին (+340,3 մլրդ ՀՀ դրամ): Բանկերի վարկային պորտֆելի միջին մեծությունը կազմել է 453 մլրդ ՀՀ դրամ, ինչը մոտ 1.4 անգամով գերազանցում է Ֆասթ Բանկի վարկային պորտֆելի մեծությանը: Բանկի վարկային պորտֆելն աճել է մոտ 120.4 մլրդ ՀՀ դրամով՝ նախորդ տարվա նկատմամբ: Շուկայում առաջատարներն են Ամերիաբանկը (1,672 մլրդ ՀՀ դրամ կամ շուկայի 21.7%), Արդշինբանկը (1,464 մլրդ ՀՀ դրամ կամ շուկայի 19%), Ակբա բանկը (737 մլրդ ՀՀ դրամ կամ շուկայի 9.6%) և Ամիո Բանկը (565 մլրդ ՀՀ դրամ կամ շուկայի 7.3%), որոնք միասին զբաղեցնում են շուկայի կեսից ավելին (57.6%):

Բանկը շարունակում է թողարկել դրամային և դոլարային պարտատոմսեր՝ պարտատոմսերի պորտֆելը հասցնելով 28.5 մլրդ ՀՀ դրամի՝ նախորդ 13.7 մլրդ ՀՀ դրամի

փոխարեն: Բանկը պլանավորում է իրականացնել շարունակական թողարկումներ նաև գործունեության հետագա փուլերում:

Բանկը 31.12.2025թ.-ին ակտիվների շահութաբերության ցուցանիշով 14-րդ հորիզոնականում է՝ 2.3%-ով, իսկ կապիտալի շահութաբերության ցուցանիշով 15-րդ հորիզոնականում է՝ 10.3%-ով:

Կապիտալի շահութաբերության ցուցանիշով առաջին եռյակում գտնվող բանկերն են՝ Արդշինբանկը 36.4% ցուցանիշով, այնուհետև Ինեկոբանկը և Ամերիաբանկը՝ համապատասխանաբար 26.3% և 24.8% ցուցանիշներով:

Բանկային համակարգի վերլուծությունը և Բանկի դիրքի գնահատումը ցույց են տալիս, որ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն ունի հսկայական ներուժ նախատեսված աշխատանքներն արդյունավետ իրականացնելու տեսանկյունից:

ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բանկի ռազմավարությունը և բիզնես մոդելը ձևավորվել են միջազգային լավագույն փորձի հիման վրա՝ համադրված հայկական շուկայի առանձնահատկություններին համապատասխանեցված լուծումներով: Բանկի բիզնես մոդելի կենտրոնում գտնվում է հաճախորդը, ում Բանկը նպատակ ունի տրամադրել անհատականացված, ժամանակակից և արդյունավետ լուծումներով բանկային ծառայություններ:

Ներկայումս Բանկը ներդնում է բանկային գործունեության իրականացման համար անհրաժեշտ գործընթացներ, սեփական ռեսուրսներով ստեղծում է բանկային ծրագրային լուծումներ, ընդլայնում ու զարգացնում է նորարարական պրոդուկտների մատուցման գործիքակազմը, զարգացնում է պրոդուկտների և ծառայությունների մատուցման թվային ուղիները (Fast Bank Mobile,Internet Banking, Fcachurd.am, Info Kiosk, Social Media):

Նախատեսվում է ակտիվների կայուն աճ՝ վարկային պորտֆելի ընդլայնման և ներդրումային արժեթղթերի միջոցով: Այս նպատակով Բանկը ակտիվորեն զարգացնում է ներդրումային ծառայությունները՝ կատարելագործելով մատուցվող ծառայությունները և ներդնելով նորերը, ինչպիսիք են օրինակ՝ ներդրումային գործունեության իրականացումը, բրոքերային ծառայությունները և հաճախորդների ակտիվների կառավարման հնարավորությունները: Ներդրումային ծառայությունների մատուցման զարգացումը խթանելու նպատակով Բանկը ձգտում է իր հաճախորդների համար ապահովել արժեթղթերի շուկայում արագ, ճշգրիտ գործարքների իրականացման, անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության հնարավորություններ: Արժեթղթերի շուկայում ակտիվության բարձրացման նպատակով Բանկը պարբերաբար իրականացնում է

դրամային և դոլարային պարտատոմսերի թողարկումներ՝ հաճախորդներին առաջարկելով մրցունակ եկամտաբերություն:

Բանկն իրականացնում է շուրջօրյա սպասարկում՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին առաջարկելով բանկային պրոդուկտներ և ծառայություններ՝ ավելի հասանելի և հարմարավետ դարձնելով ֆինանսական ծառայություններից օգտվելու հնարավորությունները : Բանկի հետագա զարգացման առաջնահերթություններից է նաև արհեստական բանականության և ավտոմատացման նորագույն լուծումների ինտեգրումը, ինչը կթույլատրի օպտիմալացնել ներքին գործընթացները և բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը:

Բանկն ակտիվորեն շարունակում է Հաճախորդի ամբողջապես թվայնացված ուղու զարգացման գործընթացը, ինչը կտրուկ կբարձրացնի ֆինանսական ծառայությունների մատչելիությունն անկախ հաճախորդների տեղակայությունից:

Միաժամանակ Բանկը մեծ ուշադրություն է դարձնում մասնաճյուղային ցանցի զարգացմանը: 2025 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունեցել է 38 մասնաճյուղ, իսկ ներկայումս ընթանում են նոր մասնաճյուղերի բացման և գործող մասնաճյուղերի արդիականացման ակտիվ աշխատանքներ՝ հաճախորդների համար հասանելիության և սպասարկման որակի շարունակական բարձրացման նպատակով:

Այս ամենի արդյունքում Բանկը նպատակ ունի հաստատուն կերպով ամրապնդել իր դիրքերը ՀՀ բանկային համակարգում՝ դառնալով նորարարական լուծումներով առաջնորդվող, հաճախորդամետ և տեխնոլոգիապես առաջադեմ ֆինանսական հաստատություն:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բանկի գործունեության բնույթը ցույց է տալիս, որ այն առնչվում է ռիսկերի լայն շրջանակի հետ: Պորտֆելի կառուցվածքից պարզ է դառնում, որ ներկայումս Բանկի գործունեությանը ներհատուկ հիմնական ռիսկերը շուկայական և վարկային ռիսկերն են:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Բանկի խնդրահարույց վարկերի (համաձայն ՀՀ ԿԲ դասակարգման չափանիշների՝ ոչ ստանդարտ և կասկածելի դասերով դասակարգված չաշխատող վարկերի) կշիռը ամբողջ բալանսային պորտֆելի մեջ 2025թ. տարեվերջի դրությամբ կազմել է 1.4%, որոնց գերակշիռ մասը ապահովված են բարձր իրացվելի թանկարժեք իրերի գրավներով կամ անշարժ գույքով:

Բանկի վարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի բարձրացումը: Շարունակվում են համապատասխան միջոցառումներ իրականացվել վարկերի տրամադրման որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի ստեղծման՝ այդ թվում ներքին սքորինգային համակարգերի ինտեգրման միջոցով:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկի գործունեությանը ներհատուկ հիմնական շուկայական ռիսկերը արտարժութի, տոկոսադրույքի և գնային ռիսկերն են:

Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելը 31.12.2025թ. դրությամբ կազմում է 26.8 մլրդ դրամ, որի միջին կշռված ձևափոխված դյուրացիան՝ 1.83:

Բանկի արտարժութային դիրքերը 31.12.2025թ-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Արժույթ	Արտարժութային դիրք
USD	1.0%
EUR	-0.2%
RUB	0.4%
Այլ	0.1%

2025թ. արձանագրվել է գնաճի աճի տեմպի նվազում, ինչի հետևանքով ՀՀ ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 6.5%:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը 2025 թվականի ընթացքում պահպանել է գրեթե նույն մակարդակը: Կազմակերպությունը տարվա ավարտին ունեցել է երկար դոլարային դիրք, որը ամբողջությամբ գտնվել է կառավարելի մակարդակում: Եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթներով դիրքերը ևս կառավարելի մակարդակում են եղել:

Բանկի վարկային պորտֆելի մոտ 35%-ը հանդիսանում են ոսկու գրավով տրամադրված վարկեր: Ներդրված է խնդրահարույց վարկերի գրավի բռնագանձման և վաճառքի բավական արդյունավետ գործընթաց, որի շնորհիվ ոսկու գների փոփոխությամբ պայմանավորված գնային ռիսկը հնարավորինս նվազեցվում է:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2025թ.-ին Բանկն իր գործունեությունը ծավալել է՝ ապահովելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակ:

Բանկը 2025թ.-ի ընթացքում սահմանված ժամկետներում իրականացրել է իր բոլոր վճարումները պարտավորությունների մասով՝ այդ թվում իր կողմից թողարկած կորպորատիվ պարտատոմսերի արժեկտրոնները:

Բանկի իրացվելիության ռիսկը գտնվում է ընդունելի մակարդակում: Ստորև ներկայացվում են իրացվելիության հիմնական նորմատիվների մասով Բանկի ցուցանիշները 31.12.2025թ.-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	16.65%
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	96.42%

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից են գործընթացների արդյունավետ մշտադիտարկումը և կառավարումը, իրավասությունների և պարտականությունների հստակ ձևակերպումը և բաժանումը, ռիսկերի հայտնաբերման, ուսումնասիրման և զսպման ուղղությամբ տարվող պարբերական աշխատանքները:

Բանկը ապահովում է կառուցվածքի, գործարար գործընթացների, ռիսկերի կառավարման, հաշվետվողականության և վերահսկողության ներքին հսկողության համալիր համակարգ՝ ապահովելով Բանկում ակտիվների պահպանումը, գործունեության անընդհատությունը, ներհատուկ ռիսկերի ժամանակին բացահայտումը ու կառավարումը, ինչպես նաև գործունեության համապատասխանության ապահովումը գործող օրենսդրությանը և Բանկում ներքին իրավական ակտերին:

Բանկում առկա են Ներքին աուդիտի, Ռիսկերի կառավարման և համապատասխանության ստորաբաժանումներ, որոնց գործառույթներից է նաև ներքին հսկողության համակարգի արդյունավետության բարձրացումը: